ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հունիսի 19-22-ը Շվեյցարիայի Համադաշնություն / Ժնև / կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև), 2024թ. հունիսի 19-22-ը

3.Հրավիրող կողմը՝

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

4.Գործուղման նպատակը՝

Մասնակցել Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 72-րդ լիագումար նիստին:

Կոնֆերանսը հարթակ է տրամադրում առաջացող խնդիրներին անդրադառնալու և ազգային վիճակագրությունը և դրա միջազգային համադրելիությունը բարելավելու համար ուղեցույցներ ու առաջարկություններ մշակելու գործում: Այն աշխարհի հնագույն վիճակագրական մարմիններից մեկն է, որը թվագրվում է Ազգերի լիգայի և 1928թ. առաջին վիճակագրական համաժողովի ժամանակով: Տարիների ընթացքում կոնֆերանսը նշանակալի դեր է խաղացել իր անդամ երկրներում վիճակագրական զարգացման խթանման գործում:

Ս. Մնացականյանը ընտրվել է Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի փոխնախագահ 2015-2017թթ., 2017-2019թթ., 2019-2021թթ. և 2021-2023 թթ. համար:

Ս. Մնացականյանը 2024թ. հանդիսանում է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի քինգմեյքեր (անձ, ով մեծ ազդեցություն ունի Բյուրոյի անդամների ընտրելու իրավասության հարցում), որը միաժամանակ Բյուրոյի փոխնախագահ է:

5.Քննարկված թեմաները՝

Ռազմավարական ուղղությունները վիճակագրական գրասենյակների և աշխարհատարածական գործակալությունների աշխատանքում, Տվյալների կապակցումը տիրույթների և աղբյուրների միջև, Աշխարհատարածական և վիճակագրական տվյալների ինտեգրումը, Արհեստական բանականության և մեծ լեզվական մոդելների օգտագործումը պաշտոնական վիճակագրության և

աշխարհատարածական տվյալների մեջ, 2025թ. Ազգային հաշիվների համակարգի իրականացումը Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի անդամ երկրներում, Միջազգային վիճակագրական աշխատանքների համակարգումը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանում, Տվյալների էթիկան, Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացման բարձր մակարդակի խմբի աշխատանքը, Կոնֆերանսի հովանու ներքո պատրաստված հաշվետվությունները, ուղեցույցները և առաջարկությունները, Հաշվետվության հաստատումը:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հունիսի 20-ին «Արհեստական բանականության և մեծ լեզվական մոդելների օգտագործումը պաշտոնական վիճակագրության և հեղինակավոր աշխարհատարածական տվյալների մեջ» խորագրով նիստին հանդես եկան Հայաստանի կադաստրի կոմիտեի ներկայացուցիչները «Մեքենայական ուսուցման ալգորիթմ՝ օդային պատկերներից շենքի կառուցվածքը հայտնաբերելու համար» թեմայով շնորհանդեսով:

Նույն օրը Ս. Մնացականյանը մասնակցել է Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի և ՄԱԿ-ի Եվրոպայի Աշխարհատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման տարածաշրջանային կոմիտեի համատեղ նիստին, որի ընթացքում առաջարկվեց առավել ինտենսիվացնել համագործակցությունը վիճակագրական և աշխարհատարածական հանրության միջև: Արդյունքում որոշվեց այդ հարցով իրականացնել խորհրդակցություններ փոխադարձ հասկացվածության աստիճանը բարձրացնելու նպատակով:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման վերջում հաստատվեց հաշվետվությունը: Օրակարգի առանձին հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվեցին օրակարգի համապատասխան կետերի քննարկման վերջում: Կոնֆերանսից հետո կպատրաստվի մանրամասն հաշվետվություն և կուղարկվի բոլոր մասնակիցներին՝ մեկնաբանությունների համար:

Կոնֆերանսի ընթացքում տեղի ունեցան քննարկումներ Եվրամիության վիճակագրական ծառայության, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ներկայացուցիչների, Ավստրալիայի, Մեծ Բրիտանիայի և Մեքսիկայի վիճակագրական ծառայությունների ղեկավարների հետ վիճակագրության մեջ արհեստական բանականության օգտագործման ռիսկերի վերաբերյալ, ինչպես նաև

Լեհաստանի վիճակագրական ծառայության ղեկավարի հետ՝ ս.թ. սեպտեմբերին ՀՀ վիճակագրական կոմիտե հնարավոր այցելության վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Մասնակցությունը կոնֆերանսին հնարավորություն ընձեռեց քննարկելու և ծանոթանալու ազգային վիճակագրական գրասենյակների և աշխարհատարածական գործակալությունների ռազմավարական ուղղություններին, վիճակագրության տարբեր ոլորտների մշակման, վարման և տարածման արդի փորձին, վերջին զարգացումներին, ուղեցույցներին և առաջարկություններին, պաշտոնական վիճակագրության ռազմավարական զարգացումներին, քննարկելու վիճակագրության առջև ծառացած խնդիրները և մարտահրավերները, իրականացված և իրականացվելիք խորացված վերանայումները, ներկայացնելու Հայաստանի փորձը, ամրապնդելու վիճակագրական ներուժն ու մոդեռնիզացնելու պաշտոնական վիճակագրության համակարգը, ինչպես նաև կատարելու կոնֆերանսի բյուրոյի քինգմեյքերի պարտականությունները:

9.Ստորագրությունը, ամսաթիվը՝

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ. սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — **ՀՀ վիճակագրական կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — **560-Ա**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) — **Ստեփան Մնացականյան**, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը — **Շվեյցարիայի Համադաշնություն՝ Ժնև**
5. Գործուղման ժամկետները — **19.06.2024-22.06.2024թթ**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ — **2024թ. պետական բյուջեով ՎԿ-ին հատկացված միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Ստեփան Մնացականյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	386709	386.71
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	$197.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	76446	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	229338	229.34
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	$155.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	60216	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	240864	240.86
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**856910**	**856.91**

Գլխավոր ֆինանսիստ — Ա. Հայրապետյան

24.06.2024թ